

ԵՐԿՐԱԳՈՐԺԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

ԳԻՏԵԼԻԳՆԵՐ.

(Նախնականություն)*

ՎՆԱՍԿԱՐ ՄԻՋԱՑՆԵՐ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՒ
ՆՐԱՆՑ ԴԷՄ ԿՈՌԻՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ.

« Եւ հասոցից մեզ փոխանակ ամացն յորս
կէկեր մարտին եւ զորեանն եւ զբոյնն եւ
խառնիմն: Յովկ, Բ. 25:

Բոլոր միջատներին կարելի է բաժանել
երեք կարգի՝ փնասակար, օգտակար եւ ան-
փնաս: Ինչպէս յայտնի է, ներկայումս հողա-
տէրերը եւ գիւղատնտեսները կատաղի կռիւ են
մղում փնասակար միջատների դէմ: Այստեղ
մեր նպատակն է խօսել միայն բոյսերի, մա-
նուանց հացարոյսերի՝ համար փնասակար մի-
ջատների մասին: Առաջ ենք բերում մի քա-
նի կարեւոր նախազգուշական տեղեկութիւն-
ներ, որոնցով հնար կլինի հեռացնել ոչնչաց-
նել այն բոլոր պայմանները, որոնք նպաս-
տում են փնասակար միջատների երեւան դա-
լուն եւ կամ նրանց արագապէս եւ առաժօրէն
բազմանալուն: Խորհուրդ ենք տալիս առանձ-
նապէս ուշք դարձնել հետեւեալ նախազգու-
շական միջոցների, առանձնապէս առաջին
վերայ: ա. Պէտք է աշխատել այնպէս զար-
գացնել բոյսերը, որ նրանք առողջ եւ ուժեղ
կազմուածք ունենալով, երկար ժամանակ կա-
րողանան իրենց սեփական դժբերով դէմ կե-
նալ միջատների յարձակումներին: Այսպէս,
օրինակ, առողջ եւ հիւթերով հարուստ բոյ-
սերը ընդունակ են երկար ժամանակ կռուե-
լու այս եւ այն միջատների դէմ եւ ծածկելու
նրանց պատճառած վերքերը: Ահա այս է
պատճառը, որ ցանելու համար բոյսեր ընտ-
րելիս անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել
կլիմայի, հողի յատկութեանց, դիւրբի վրայ
եւ ապա ըստ այնմ նաեւ կանոնաւորապէս խնա-
մել: Այս պատճառով պէտք է փոփոխել եւ
տարբեր կերպով կատարել ցանքը, որպէս զի

այդպիսով նայած յարմարութեան, հնար լինի
արագացնել կամ դանդաղացնել բոյսի աճեցո-
ղութիւնը: Այսպէս, օրինակ, մի քանի միջատ-
ների դէմ կռուելիս՝ աշնանացանքը, որքան
այդ հնարաւոր է, պէտք է վաղ կատարել,
որպէս զի շուտ հասնի եւ հասունացած ժա-
մանակը միայն կենթակայ լինի միջատների
աւերիչ յարձակմանը, որ սովորաբար աւելի
թեթեւ է լինում: * Բ. Աւաղիր կերպով եւ

* Կան գիտութեամբ զբաղուող մարդիկ, որոնք
փնասակար միջատներին ոչնչացնելու համար՝ աշ-
խատում են աւելի եւ աւելի զօրեղ միջոցներ գտո-
նել: Այդպիսիներից մէկն է Գ. Բ. Զօլլուուզ, որ
խորհուրդ է տալիս խողանք շատ վաղ եւ որքան
հնարաւոր է, խորը վարել, Գուցէ շատերը հա-
ւատ չընծայեն այս խորհրդին, որովհետեւ աւելի
շատ անգամ լսել են ուրիշներից, որ վարը պէտք է
տեղի ունենայ որքան կարելի է վաղ եւ ծանծաղ,
բայց եւ յամենայն գէպս կարծում եմ, որ հետա-
քըքը կլինի ծանօթանալ հեղինակաւոր գիտնա-
կի այս հայեացքի հետ:

Խողանի վաղ եւ ծանծաղ կատարած վարը ան-
հրաժեշտ է, որպէս զի արտում հնձից մնացած
բոյսերը շուտով նեխուեն, որովհետեւ որքան աւելի
աղատ ներգործութիւն ունենայ օդը, լոյսը եւ ուրիշ
մթնոլորտային գործութիւնները, այնքան աւելի կա-
տարեալ կերպով տեղի կունենայ բուսական մնա-
ցորդների նեխուիլը. բայց հողի մէջ գտնուող ան-
պէտք խոտերի սերմերը կարճ ժամանակուայ մէջ
կոկենն ծիլերարձակել, մեծանալ, որոնք հնարաւոր է
բոլորովին ոչնչացնել եւ արմատախիլ անել միայն հո-
ղը խորը վարելով, Ի հարկէ շատ քիչ են այնպիսի-
ները, որոնք հնարաւորութիւն կունենան իրենց
բոլոր քաղած արտերը վարել իսկոյն հնձից յե-
տոյ, Շատ արգելադրութ պատճառներ կան, աշխա-
տող ձեռքերի պակասութիւնը, վատ եղանակը, իսկ
աւելի յաճախ տեղի ունեցող գիւղացու անհոգու-
թիւնը:

Շատերին այնպէս է թուում, որ իրրեւ թէ
փնասակար միջատների դէմ կռուելու գործում
վարի ժամանակը այնքան աչքի ընկնող նշանակու-
թիւն չունի, այդպիսիները ի հարկէ սխալում են,
կարող ենք համարձակ կերպով տեսլ, որ անբեր-
ութեան գլխաւոր պատճառը այդ է, հետոյ (հան-
գրատեան թողած արտը) չափազանց նպաստում է
փնասակար միջատների բազմանալուն, որոնք յե-
տաձգելով բոյսի աճեցողութիւնը, սննդառութեան
կանոնաւորութիւնը, արգելք են դառնում կանո-
նաւոր հասկեր կազմելուն:

Վնասակար միջատները բոյսերի մէջ կրկու
կերպ հիւանդութիւն են յառաջացնում.

* Տես Արարս 1900 թ. համար Ը. եւ Թ. եւ, 402:

խուր ժամանակին հինս հիւանդոտ և վարա-
կուած բոյսերը առողջների միջից պէտք է
հեռացնել և կամ առանձնապէս խնամել, որովհ-
հետեւ վարակուած բոյսերը կարող են իրենց
հիւանդութիւնը հաղորդել առողջներին և
այդպիսով վնասնել ամբողջ բուսականութիւնը:
Գ. Միջատների լարակած տեղերը առանձնապ-
նել և ամէն միջոց գործ դնել, որպէս զի
հեռաւոր տեղեր տարածուելու առաջն առ-
նուի: Միջատներից մի քանիսը ինչպէս օրի-
նակ գիշերային թիթեռը, մորեխը և ին. տա-

ա. Մի որոշ մեծութեան հասած բոյսի ածե-
ցողութիւնը յանկարծ սկսում է գանգաղ առաջ
գնալ. շատերը մինչև իսկ բողբոջին ոչնչանում են:
Այդպիսի հանգամանքներում ոմանք ասում են,
թէ աշնանացանը սառել է և անբերութեան պատ-
ճառը համարում են զանազան միջնորդային երե-
ւոյթներ: Մինչդեռ Գ-ր Լօլլրունզը հաստատում
է, որ այդ հիւանդութիւններ յառաջանողները
գլխորդաձանձր (гесенная муха) և այլ այսպիսի
միջատներ են:

Բ. Հացաբոյսերը մեծանում, հասկ են բռնում
և ըստ երևոյթին ամէն բան որոշ կանոնաւորու-
թեամբ առաջ է գնում, բայց յանկարծ այդ առողջ
բոյսերը կախում են իրենց գլուխները. մարդ կար-
ծում է թէ դրա պատճառը հասունացած հասկե-
րի ծանրութիւնն է: Բոյսերից շատերը սկսում են
զեղչնել, մանաւանդ վերին կապամէջերում և թէ-
պէտ հասկը մնում է կանգնած, բայց հատիկներ
կամ բողբոջին չեն լինում և կամ եղածը նոյն
վիճակի մէջ էլ մնում է: Գիւղացին այդպիսի հաս-
կերը դատարկ կամ վաղահաս է համարում, Այս
թշուառ երևոյթի պատճառը, ի հարկէ, վերևում
յիշուած միջատներն են:

Բոյսերի այս բոլոր թշնամիները ձմերում են
չվարած խողաններում (քաղած արտ) այն բոյսերի
վրայ, որոնք հացահատիկներն հաւաքելու ժամա-
նակ նրանցից թափուած սերմերիցն են առաջ եկել:

Որպէս զի սրանց յառաջացրած անբերու-
թեանց առաջն առնենք, Գ-ր Լօլլրունզը խորհուրդ
է տալիս խողանները իսկոյն և եթ հացաբոյսերն
հաւաքելուց յետոյ առանց ուշացնելու խորը վա-
րել, որովհետեւ ծանծաղ վարը այն աստիճան չի
կարող նպաստել ոչնչացնելու վնասակար միջատ-
ներին: Ծանծաղ վարի միջից շատ կարճ միջոցում
միջատները կարող են հեշտութեամբ դուրս գալ
և նորից շարունակել իրենց վնասակար գործու-
նեութիւնը:

Այս կարծիքի հետ համաձայն են նաև շատ
հմուտ և փորձուած գիւղատնտեսներ:

Բաժուում են այս և այն կողմ զանազան բնա-
կան եղանակներով: Յաճախ նկատելի է նաև
վնասակար միջատների աստիճանաբար և դան-
դաղ ակզախութեւթիւնը, այսպէս օրինակ լժըր-
թուրները, անթեւ բլէզները, մորեխի մի տե-
սակը և այլ ուրիշ միջատների որոնք սողալով
հետզհետէ յառաջ են գնում: Այսպիսի հան-
գամանքներում միջատների առաջն առնելու
համար նրանց ծանապարհի վրայ պէտք է փո-
րել ուղղաձիգ պատեր ունեցող առուների
որտեղ ընկնող միջատներին պէտք է խկոյն
հաւաքել և ոչնչացնել: Նաա անգամ վնասա-
կար միջատներին քամիներն են քշում, տա-
նում հեռաւոր երկիրներ: Համարեա այս կերպ
են տարածուում ուտիճների, ֆելօկները և
ուրիշ բուսական ոջիկները, քամին քշում և
հեռաւոր կողմեր է տանում նաև թիթեռ

Առաջ ենք բերում գիւղատնտեսութեանը
գործնականապէս քաջ ծանօթ մի անձի երկար ժա-
մանակուայ ընթացքում կատարած մի փորձը: Մի
քանի անգամ խողանը ծանծաղ վարելով, նկատել է,
որ յաջող հետեանքների չի հասնում: Նրա ցա-
նած դարին և վարսակը սկզբներում մի քանի օր
բնական ընթացքով աճել են, բայց ծիւրը դուրս
գալուց հաղիւ ութ օր է անցել, տերեւները սկսել
են զեղչնել և բուսականութեան կէս մասը ոչնչացել
է, իսկ նրանք, որոնք մի կերպ անց էին կացրել
այդ վտանգաւոր շրջանը կամ բողբոջին դատարկ
և կամ չհասունացած հասկեր են տուել, Հիւանդ
բոյսերին լաւ զննելուց յետոյ յիշեալ գիւղատն-
տեսը նկատել է, որ բոյսի պարանոցը կոծած է,
և որպէս զի գոնէ մի թիթեռ արդիւնք ստանար,
ստիպուած է եղել շատ խիտ կատարել ցանքը: Մի
քանի տարի այս տեսակ անյաջողութեանց ենթակայ
լինելուց յետոյ, երբ մի անգամ նա փորձել է
խողանների վարը խորը կատարել, նկատել է, որ
յաջող հետեանքներ է ունենում իր այս փորձը, նախ
որ անբերութեանց առաջն է առնուել և երկրորդ,
կիսով չափ աւելի պակաս սերմ է հարկաւորուել,
մինչդեռ հարեան արտերի դարին իրենց աճման
հէնց առաջին շրջանում սովորականի պէս հիւան-
դանում էին, որովհետեւ երկրագործները վարում
էին նախկին եղանակով, ծանծաղ, Այս հմուտ գիւ-
ղատնտեսի կարծիքով թէ ծանծաղ և թէ ուշ տեղի
ունեցող վարը վնասակար միջատների համար ձմե-
րելու նպաստաւոր պայմաններ է յառաջացնում:

Ցանկալի է, որ մեր հողատէրերն այսուհետեւ
առաջնորդուին Գ-ր Լօլլրունզի տուած խոր-
հուրդներով:

Թիթևներ և մի քանի այլ միջատներ: Սովորաբար այսպիսի գեղեցիկ միջատների վաթախումը տեղի է ունենում պարբերական քամիների ուղղութեամբ: Վեաքի և սուռակների դարձանային ջրերն ևս ջրում են դառալան հետևոր կողմեր ծառերից պոկած ամրոջ ընկել հոգով ծածկուած արմատներով թփեր և խոտեր: Նրանց հետ միասին հեշտութեամբ տեղափոխում են նաև այդտեղ ապրող միջատները մանաւանդ նրանց ձուերը: Արհեստական կերպով մնասակար միջատների ստրածուելը առաջ է գալիս այն ժամանակի երբ մի տեղից միասեղ ապրանքներ են փոխադրում: Այս միջոցով Ամերիկայից եւրոպայ փոխադրուեց յարդի մէջ ֆելօքսերեան ուտիճն և այլն: Գնհրաժեշտ է կանոնաւոր կերպով փոքրիկ հերկել բոլոր միջակները (միջատահան երկու արախ), փարեւահողի մէջ պարսպ մնացած անմշակ հողերը, որովհետև սկզբներում հէնց այսպիսի տեղերում են բուն դնում և այդպիսի տեղերի բուսականութեամբ են զխաւորապէս կերակրում: փաստակար միջատները, որոնք յետոյ անց են կենում արտերի մէջ: Եւ Արմինացանութեան փոփոխական կզանակը և տարբեր տեսակ ու տարբեր հասակ ունեցող բոյսերի միաժամանակեայ աճեցողութիւնը օգտակար է, որովհետև այդպիսով պակասում է դիւղատնտեսութեան վտանգաւոր գրութիւնը և նորա բազմն այլ ևս մի որ և է միջատից կախուած չի լինելու: Եթէ միջատներն աշխատեն փնտել մի տեսակ բոյսի, միւսները կարող են ողջ մնալ: Այսպիսի պայմանների մէջ նրանք դժուարութեամբ կկարողանան տարածուել այս և այն կողմ, կլժուարանան սնունդ ձեռք բերել, նրանց աճեցողութիւնն ևս կզանգաղի և մի տեղի բուսականութիւնը վերջացնելուց յետոյ, երբ սնունդ հարկաւոր լինի ստիպուած են հետևոր ճանապարհորդութիւն անել, որի ժամանակ սովորաբար նրանց մեծ մասը փչանում է: Չպէտք է մի քանի տարի անընդհատ մի և նոյն տեղում նոյնատեսակ սերմեր ցանել, նոյնատեսակ բոյսեր աճեցնել, որովհետև փոփոխելով մի տարում բազմացող միջատները միւս տարում մի և նոյն բոյսը չգանելով ոչնչանում են: Դեպք է հրապու-

րել և պահպանել միջատների թշնամիներին մանաւանդ միջատակեր թռչուններին և ամէն կերպ նպաստել նրանց արագ բազմանալուն: Հրապուրելու ամենալաւ միջոց կարելի է համարել առանձնապէս նրանց համար շինուած արհեստական բները:

Վերջացնելով բոլոր նախադրուշական միջոցները, այժմ անհրաժեշտ է յիշել նաև այն բոլոր միջոցները, որոնք ուղղուած են փնտաւար միջատների դէմ՝ նրանց ոչնչացնելու համար: 1. Նախ և առաջ ձեռքով պէտք է հաւաքել այն քիչ թէ շատ մեծ միջատներին, որոնք յայտնապէս տեղաւորուելով բոյսերի ներքին մասերի վրայ, երկրից ոչ շատ բարձր, փնտում են բոյսերին և որոց մարմինը ծածկուած է մարդու կաշուին փնտաւար դիւրաբեկ մաղերով: Այս է նոյա հաւաքել վեղբոների, շշերի կամ կուժերի մէջ, ուր օգտակար է նախօրոք լցնել նաւթախառն քիչ ջուր, այսպիսով հեշտութեամբ կարելի է հաւաքել բոլոր մերկ թրթուրները, ծառերի տերեւների, ծաղիկների և պտուղների անխնայ ուտող հասած միջատների, հարսնեակների, երբ նրանք բաց ընկած են մնում և կամ շատ ծածկուած չեն լինում, ձուաներ, եթէ տեղը բարձր չէ և կոյտերով է, մատաղ թրթուրների ձմեռային բներ, որ սովորաբար չոր տերեւների վրայ են լինում և նոյնպէս ամառային բներ, որտեղ պատասպարուած են լինում հարսնեակների բոժոժներ: Երբեմն մի քանի տեսակ միջատներ հաւաքելիս, անհրաժեշտ է լինում մի յանկարծական ցնցումով թափ տալ նրանց ծառերի բարձր ձիւղերից, զաղաթներից, այսպիսի հանգամանքներում ծառի տակ հարկաւոր է փռել մի քաթան կամ փախած, որպէս զի միջատները ուրիշ տեղ չթափուեն: Եթէ միջատները ցերեկը աւելի շարժուն են և վայր ընկնելուն պէս հեշտութեամբ են թռչում այս և այն կողմ, այն ժամանակ պէտք է հաւաքել առատ շատ վաղ քանի դեռ միջատները չեն տաքացել և դանդաղաշարժ վիճակի մէջ են գտնուում: 2. Հէնց տեղն ու տեղը ձմեռել, ոչնչացնել բոլոր նոր գուրս եկած միջատներին, որ սովորաբար մատաղ տերեւիկների մէջ են լինում: Չանպակն գործիքներով ոչնչացնում:

սատակեցնում են դեանի վրայ դեռ նոր դուրս եկած մատաղ մորեխը: 3. Յրուած վնասակար միջատներին մի տեղ հաւաքելու համար կարելի է գործ դնել զանազան հրապուրիչ միջոցներ, որպէս զի յետոյ հնար լինի միանգամից ոչնչացնել այդ բոլորը: Այսպէս, օրինակ, կան որոշ միջատներ որոացող ծառեր, հրապուրող բոյսեր՝ սպառու ելակ: Այս վերջինները ձգում են դէպ իրենց մայիսեան բզեզի թրթուրները: Յորենի ցանքերն աղբերն ևս իրենց մօտ են հաւաքում մի քանի վնասակար միջատներ: 4. Շինւում են նաեւ որոացող տնային, որ գործ են դրուում միջատների յարձակմունքից չվարակուած, չվնասուած տեղերը պաշտպանելու համար: Շատ անգամ միջատները պատահմամբ են ընկնում այդպիսի առուների մէջ, օրինակ թրթուրները: Կայ նաեւ մի տեսակ մորեխ, որոնց կարելի է աւելներով քշել դէպի պատրաստուած առուները: Ամէն անգամ որոշ ժամանակից յետոյ պէտք է նայել առուների մէջ և խոյն ոչնչացնել նոցա մէջ ընկած միջատներին: 5. Մի քանի տեսակ միջատներից վնասուած բոյսերի վրայ կարելի է խորհուրդ տալ ցանկել մակօրկու քամուածք, նաւթախառն սապոնաշուր և այլ ուրիշ հեղուկներ, որոնք խոյն և եթ ոչնչացնում են միջատներին: 6. Միջատների հետ միասին պէտք է այրել ոչնչացնել նաեւ այն նիւթերը, որոնց մէջ նոքա ձկնուր պատապարուել էին. այսպէս, օրինակ՝ զանազան միջատներից վնասուած դաշտը հնձելուց յետոյ պէտք է հաւաքել նաեւ արմատի վրայ մնացած ծղոտները, որոնց մէջ ձմերում են թրթուրների մեծամասնութիւնը և խոյն այրել: Երկուստ պէտք է վարուել նաեւ ծառերի կեղեւների և մնացած կոճիկների հետ, երբ նկատուի, որ նրանց մէջ ևս պահուած են վնասակար միջատների որդեր: 7. Միջատներից վնասուած դաշտերը հողի մէջ ոչ շատ խորը մտած հարսնեակներից պատակու համար, կարելի է, խորհուրդ տալ մի յարմար ժամանակ վարել ամբողջը: Զմեռը հարկաւոր է վարել նաեւ պտղատու ծառերի շուրջն եղած հողերը, որպէս զի այդպիսով զրկուելով բուսական պինդ ծածկոցից խոնաւութեան և ցրտութեան արդեցութեան տակ այնտեղ պա-

տրսպարուող վնասակար որդերն և հարսնեակներն ոչնչանան: * Այդինքնում՝ երբեք չպէտք է վայր թափուած թողնել փչացած, որդնուած պտուղներ, նոքա կարող են մանել հողի մէջ և ապագայում վնասակար միջատների դատնալ: Ընտանի թռչունները խիստ օգտակար են այդինքնի համար, որովհետեւ խոյն և եթ ոչնչացնում են ծառերից թափուած միջատները:

Վնասակար միջատներին սուսնկերով կամ նիւտուող հիւանդութեամբ վարակելը դեռ մինչև այժմ իբրեւ փորձ էր կատարւում, վերջերս կուուելու այդ եղանակը արդէն սկսել են գործ դնել զանազան տեղերում:

Այսպէս բնդհանուր կերպով վնասակար միջատների և նրանց դէմ կուուելու միջոցների մասին խօսելուց յետոյ, կարեւոր է նաեւ որքան այդ հնարաւոր է, մի քանի տեղեկութիւններ հաղորդել նաեւ գույն, շատերին ծանօթ վնասակար միջատների մի քանիսի մասին առանձին առանձին:

(Կը շարունակուի):

Դ. Զ.



ՇԻՐԱԿԻ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Բ.

ՊԱՏԴԱՄԱԽՕՍՆԵՐ

Յուրա է, դուրսը, ցուրտ էլի Ղարախաշը կատաղած փշում է. կարծես երգուել է, մինչ ի լոյս երկնքի երեսին եղած բոլոր ամ-

* Երբ միջատները անտառներում հողի երեսին կամ նրա վերին շերտերում հարսնեակ են դառնում, կարելի է խորհուրդ տալ այդպիսի տեղերում բաց թողնել խողբին և բնառնի թռչուններին, որոնք հեշտութեամբ կգտնեն նոցա և կչափեն: Խողբն ուտում են նաեւ որդնուած կաղիւններ, նախ քան հասնելը վայր թափուած հիւանդ տանձեր, խնձորներ և ուրիշ այլ փչացած պտուղներ: